Բայց նա միակ գրիչը չէր այս ժամանակ. «յոգնամեղ եւ անարհեստ գրչի Վարդան արեղայի» ձեռքով ՋԲ (= 1453) թուին գրուած է մի աւետարան նոյն վանքում(*)։ Նոյն Վարդան գրիչը դարձեալ գրել է մի աւետարան 1460 թուին «ի վանքս Աղջոց» Ստեփանոս անունով մէկի ցանկութեամբ, որ նուիրել է Դառնի գիւղաքաղաքի եկեղեցուն. գրիչը իւր յիշատակարանի մէջ նկարագրում է Ուսուֆի որդի Ջհանշահի (1437-1460) արշաւանքը դէպի Հրէ «երկու հարիւր հազար հեծելով եւ եօթն տարի անդ կացեալ, եւ ի դուրս եկեալ բազում աւարաւ» (Բ. 52)(**)։

Վարդանը իբրեւ եպիսկոպոս նոյն թուականին գրել է մի աւետարան Դանիէլ վարդապետ Սեւանեցու համար. աւետարանը փոքրագիր է, արծաթապատ կազմով, մագաղաթ, լաւ բոլորգիր, նկարազարդ՝ խոշոր տառերով, աւետարանիչների պատկերներով, սկզբնազարդերով եւ լուսանցքի զարդերով։ Գլուխների սկզբնագիրը թանձրագիր, տների սկսուածքը ոսկեգիր. ժամանակին եղել է շքեղ, բայց վատ է պահուած։ Նկարչութիւնը միջակից բարձր, կիլիկեան ոճով։

Յիշատակարանը շարադրուած է գեղեցիկ հայերէնով ոմն Ովանէսի կողմից, որ, գուցէ, նոյն լինի

Պատկեր 184.

Մի արձանագրութիւն եւս ունինք 1471 թուականից այս երկու գրիչների անունով. միայն Վարդանն արդէն եպիսկոպոս է եւ ուխտի առաջնորդը, իսկ Դաւլուստը փակակալ. սրանց հետ միացած նաեւ տէր Յոհաննէս եւ Աքանդար Յլղուրենց եւ մի այլ Դաւլուստ միասին հազար դահեկան են տալիս, ձիթահանք չինում եւ նուիրում վանքին (Յաւել. Ա. 152)։

Մի արձանագրութիւն եւս ունինք 1471 թուականից այս երկու գրիչների անունով. միայն Վարդանն արդէն եպիսկոպոս է եւ ուխտի առաջնորդը, իսկ Դաւլուստը փակակալ. սրանց հետ միացած նաեւ տէր Յոհաննէս եւ Աքանդար Յլղուրենց եւ մի այլ Դաւլուստ միասին հազար դահեկան են տալիս, ձիթահանք չինում եւ նուիրում վանքին (Յաւել. Ա. 152)։

վերև յիշուած հազար դահեկանի նուիրաբերութեան մասնակից «տէր Յոհանէս»ի հետ։ Այստեղ ասուած է, թէ Դանիէլ վարդապետ Սեւանեցին «չարժեալ ի հոգւոյն սրբոյ, եդ ի մտի իւրում ըստանալ աւետարան փոքր տուփ, գեղեցկագիր և ըստուգաբան, լինել անՁինՁ յիշատակ իւր և ծնողաց և ազգականաց իւրոց։ Զոր և ես Վարդան եպս. մեղապարտ ոգի, անուամբ միայն և ոչ գործով, վասն խնդրոյ ճգնազգեաց և սրբասնեալ քաջ բարունոյն Դանիէլի ըստեր տկարութիւն մարմնոյ և ըստուտ ըզբաղումս ի բաց դնելով, ապաւինեցաք յԱՏ և ի Միածին Ցս. Քս. յորդին ՅՍ

(*) Փիրղալէմեան, նոտարք. 195։

(**) Փիրղալէմեան, նշխարք Հայոց Պատմ., անտիպ. Էջմիածնի մատենադարանում այժմ։